

## ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2016 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրված հրդեհների և դրանց հետևանքների

2016թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ ԱԻՆ ՊՀ և ՏՍՏ-ում հաշվառվել է 798 հրդեհ՝ 377 070 568 դրամի նյութական վնասով, զոհվել է 5 և վնասվածքներ ստացել՝ 18 մարդ: 2015թ.-ի նույն ժամանակահատվածում հաշվառվել էր 751 հրդեհ՝ 222 864 913 դրամի նյութական վնասով, զոհվել էին 20 և վնասվածքներ ստացել՝ 14 մարդ: Այսպիսով, հրդեհների քանակն աճել է 47 դեպքով (6.25%), նյութական վնասի գումարը՝ 154 205 655 դրամով (69.2%), իսկ զոհերի թիվը նվազել է 15-ով (75%), վնասվածք ստացածներինը՝ 4-ով (28.57%):

Հրդեհների քանակը նվազել է Գեղարքունիքի, Արագածոտնի, Վայոց ձորի, Արարատի, Սյունիքի, Կոտայքի մարզերում, իսկ աճել՝ Երևան քաղաքում և մնացած բոլոր մարզերում: Հրդեհների 35.3%-ը տեղի է ունեցել բնակելի հատվածում, 26.4%-ը՝ բաց և խոտածածկ տարածքներում, 10.8%-ը՝ ավտոմեքենաներում, իսկ 27.5%-ը՝ այլ նշանակության օբյեկտներում:

Հրդեհների առաջացման հիմնական պատճառներն են կրակի հետ անզգույշ վարվելը՝ 51.5%, էլեկտրական սարքավորումների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը՝ 23.8%, երեխաների խաղալը կրակի հետ՝ 5.8%, հրկիզումները՝ 4.8%, վառարանների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը՝ 3.5%:

Հրդեհների 63.5%-ն արձանագրվել է քաղաքային, իսկ 36.5%-ը՝ գյուղական բնակավայրերում: Հանրապետությունում տեղի ունեցած հրդեհներից 28-ը խոշոր են (նախորդ տարի՝ 21), որոնցից պատճառված նյութական վնասի գումարը կազմել է 223 091 605 դրամ, որն ընդհանուր նյութական վնասի 59.2%-ն է: Առավել խոշոր հրդեհներից են՝

1. 17 հունվարի, ք.Երևան, Արցախի 42, <<ՖԼԵՇ>> ՍՊԸ, պահեստ: Նյութական վնասը՝ 89 324 000 դրամ: Հրդեհի առաջացման հավանական պատճառը՝ ստատիկ լիցքերի առկայությունը կամ մեխանիկական ազդեցության հետևանքով առաջացած կայծը:

2. 11 հունիսի, Լոռու մարզ, ք. Սպիտակ, բնակելի տուն: Նյութական վնասը՝ 14 500 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ էլեկտրատեխնիկական բնույթի:

3. 23 հունվարի, ք.Երևան, Ս.Զորավարի 11/1, <<Մանդարին կոսմետիկս>> ՍՊԸ, պահեստ: Նյութական վնասը՝ 10 900 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ էլեկտրահաղորդալարերի կարճ միացում:

4. 29 հունվարի, ք. Երևան, Դավթաշեն, <<Սյունիք>> խանութ: Նյութական վնասը՝ 10 095 605 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ էլեկտրահաղորդալարերի կարճ միացում:

5. 18 մայիսի, Լոռու մարզ, գ. Շնող, 7-րդ փող., տուն 25: Նյութական վնասը՝ 9 065 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ հրկիզում:

6. 19 ապրիլի, ք.Երևան, Ամիրյան 4/3, <<Նացիոնալ>> հյուրանոցի տանիք: Նյութական վնասը՝ 8 400 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ էլեկտրահաղորդալարերի կարճ միացում:

7. 9 հունիսի, Լոռու մարզ, գ. Զրաշեն 1 փող., 12 նրբ., տուն 4: Նյութական վնասը՝ 7 700 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ ամպրոպային լիցքեր:

Զոհերով հրդեհների առաջացման հիմնական պատճառներն են էլեկտրական սարքավորումների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը, ինքնահրկիզումը: Զոհերի գերակշիռ մասը՝ 4-ը, արձանագրվել է բնակելի հատվածում, 1-ը՝ բաց տարածքում:

Զոհերն (որոնք բոլորը տարեցներ են) արձանագրվել են հետևյալ տարածաշրջաններում. ք.Երևան՝ և Շիրակ՝ երկուական, Արմավիր՝ մեկ:

6-ական մարդ վնասվածքներ է ստացել բաց տարածքում և ավտոմեքենաներում, 4-ը՝ բնակելի հատվածում, մեկական՝ ԱԳԼՃԿ-ում և հացի արտադրամասում: Վնասվածքները գրանցվել են Լոռիում՝ 8, ք.Երևանում՝ 4, Արագածոտնում՝ 2, Շիրակում, Կոտայքում, Տավուշում և Սյունիքում՝ մեկական:

Դատաքննչական մարմիններ է ուղարկվել 92 հրդեհի նյութ, որոնցով քրեական գործեր են հարուցվել 39 դեպքում: Տեսչության տարածքային մարմինների կողմից կայացվել են քրեական գործի հարուցումը մերժելու մասին 420 որոշումներ, որոնց օրինականությունը ստուգվել է համապատասխան տարածաշրջանի դատախազությունների կողմից:

Կատարվել է արձանագրված հրդեհների հաշվառում, վերլուծություն և վիճակագրական տվյալները լուսաբանվել են գրաֆիկներով ու աղյուսակներով:

ՊՀ և ՏՍՏ հրդեհների հաշվառման, վերլուծության  
և հակահրդեհային քարոզչության բաժնի պետ

Ս.Հայրապետյան